Սաֆիկուլի խանը ի դեմս Հակոբ Ջուղայեցու տեսնում էր մի անձնավորության, որն իր հեղինակությամբ, վայելած ժողովրդականությամբ և գործիմացությամբ կարողանում էր լուրջ հակահարված տալ հայերի նկատմամբ կիրառվող ասիմիլյացիայի քաղաքականությանը և պայքարել նրա կողմից արտահայտվող հարստահարման փորձերի դեմ։ Ուստի, երբ կաթողիկոսը 1672 թվականին, արդեն հուսահատված ստեղծված ծանր պայմաններից, փորձեց անձամբ գնալ Սպահան շահի հետ հանդիպելու, Սաֆիկուլի խանը արգելք հանդիսացավ և ճամփից ետ վերադարձնելով արգելափակեց նրան Երևանի Անանիա առաքյալի վանքում։

Մեր կարծիքով, 1672—73 թվականներին է վերաբերում նաև Հակոբ Ջուղայեցու նամակը ուղղված ռուսաց Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, երբ նա խանի հրամանով բանտարկված լինելով, չկարողանալով գնալ Սպահան և չունենալով օգնության ոչ մի հույս, հավանաբար իրեն շրջապատող հայ գործիչների խորհրդով նպատակահարմար է գտել դիմել Ռուսաստանի կայսրին, որպես քրիստոնյա պետության վեհապետի և խնդրել նրա միջամտությունը հայերի նկատմամբ Սեֆյան Իրանի վարած քաղաքականության հարցում։

«Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա պարսից պաշտոնյաների կողմից տրվում են անա օտարոտի հարկեր,— գրում է նա իր նամակում,— և մեզ, որ չենք կարողանում մեր չքավորության և ազքատության շնորհիվ հատուցանել այդ հարկերը, քշում են դեպի բանտ (ընդգծումը մերն է —Հ. Փ.), չարչարում են, տանջում և վերջապես, որ հետինն ու գլխավորն (է) մահմեդականների նպատակների՝ իրենց դավանանքն են հարկադրում ընդունել։ Եթե այդչափ հալածանքները զրկեին մեզ միայն հարստությունից և աշխարհային ստացվածքներից, չարիքը փոքր կլիներ, և ես լռության կտայի այդ։ բայց երբ տեսնում եմ, որ օր օրի վրա մեր ի Քրիստոս սրնվող զավակները հեռացած (մայրական) ստինքից, խաբված պատանիները նավով հեռանալիս, չափահասներին ու գիտակցության եկածներին ուժով մղված դեպի հավիտենական փրկության հակառակ դավանանքը,— չկարողանալով տանել այդքան մեծ կորուստը, անա, արցունքներ թափելով առ Աստված՝ նրա պատկերի առաջ, մոտենում եմ նաև յուր թագավորության մեջ նրա տեղապահ Կայսեր, Ձերդ Մեծությանը, որպեսզի բարեհաճե օգնել մեզ, խեղճությունից ճնշվածներիս, և երբ Նորին ամենազոր Մեծությունը պարսիկների մոտ դեսպաններ ուղարկելու լինի մի քանի խոսք (ասել) ի պաշտպանություն մեր ստացվածքի... յուր թագավորական դիվանագետներին հրամայե ազդել։ Ռուս իշխանությունը մեծ նշանակություն ունի պարսիկների աչքում և գուցե առաջիկայում հավակնություն չունենան այնքան տանջել նրանց, որ ի Քրիստոս-Աստվածն ունեցած ընդհանուր հավատի շնորհիվ, կարող կլինեն Ձեզ ուղղել իրենց հայացքը»[1]։

Նամակի մեջ բերված հատվածից պարզորեն երևում է, որ այդ ժամանակ Հակոբ Ջուղայեցին դեռևս հավատում էր, որ հալածանքներն ու հարստահարության դեպքերը «պարսից պաշտոնյաների» անձնական նախաձեռնության հետևանք են և որ եթե ռուսաց ցարը իր դեսպան-

[1] Ա. Հովհաննիսյան, «Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին», Արարատ, 1915 թ., էջ 780—81. հմմտ. Армяно-русские отношения в XVII веке, լատիներեն բնագիր՝ էջ 98, ռուս. թարգմ.՝ էջ 257։